## ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐԶԵԱՆ
### ՀՐԱԺԱՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Անցնող տարւոյս Դեկտեմբեր 15ին Հռոմի մէջ իր մահկանացուն կնքեց Գերերջանիկ
Տէր Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան հրաժարեալ կաթողիկոսը Անարատ Յղութեան բա-
րեպաշտօն հայ մայրապետներու վանքին մօտ։

Ալեփառ հայրապետին կեանքին ու գործին վրայ չենք ծանրանար քանի որ ամենուն
ծանօթ է արդէն թէ իբրեւ Ատանայի առաջնորդ 1892–1910, եւ թէ իբրեւ կաթողի-
կոս-Պատրիարք՝ 1910–1931։

Ան կը վախճանէր իր 77 ամեայ հասակին, ծնած ըլլալով 1855ին ի Կուտինա։ Ա-
տուածաբանական ուսումները կատարած էր ի Հռոմ եւ քահանայացած 1883ին. եւ
կը յուսար տարին մը տօնել յիսնամեակը, որուն համար հաւատացեալներուն ծրի
բաշխելու դիտումով տպագրել տուած էր «Բանալիք Քաւարանի» աղօթագիրքը որ հո-
գեշահ մատեան մըն է միանգամայն։

1892ին կոչուած էր Ատանայի առաջնորդութեան. եւ երկար տարիներու ընթացքին
ազգասէր եւ առաքելաջան գործունէութիւն մ'ունեցած էր, մանաւանդ 1909ի Կիլի-
կեան աղէտի օրերուն։

1910ին կ'ընտրուէր Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ։ Զինադադարէն վերջ
Հռոմ քաշուած էր եւ փոխանորդներ կը վարէին իր պաշտօնը. իր օրով Հայ Նուի-
րապետութեան Հարց ժողովը ի Հռոմ, 1928ին, Կաթողիկոսական Աթոռը Կ.
Պոլսէն Պէյրութ փոխադրեց, ուր հազիւ երկու տարի կրցաւ պաշտօնավարել. ծերու-
թիւնն եւ վերահաս հիւանդութիւններն ստիպեցին հեռանալ պաշտօնէն. 1931ի Մար-
տին արդէն քաշուած էր Հռոմ, եւ Յունիսին վերջնականապէս իր հրաժարականը կու-
տար Ս. Քահանայապետին։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ մեծ շուքով Լեւոնեան կղերանոցի գեղեցիկ
եկեղեցւոյն մէջ։ Կը մասնակցէր Հռոմի հայ գաղութը, Լեւոնեան կղերանոցը իր մեծա-
ւորներով եւ Մխիթարեան վանատան հայրերն եւ ուսանողութիւնը, ինչպէս նաեւ լա-
տին կղերէն եւ արեւելեան եկեղեցիներէն բազմաթիւ եկեղեցականներ. Ս. Քահանա-
յապետին կողմէ յատկապէս ներկայացուցիչ եկած էր Ծիրանաւոր Սինչերոյ։

Հասարակաց մեծ սուգին մասնակից, կը մաղթենք յաւիտենական հանգիստ իր հոգւոյն։

---

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆ ՄԱՍԵՀԵԱՆ
### ( ՇԷՅՔՍՓԻՐԻ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻՉ )

Ականաւոր քաղաքագէտ եւ գրագէտ հայ դէմք մըն է որ կ'անհետանայ յանձին Յով-
հաննէս Խան Մասեհեանի։ Ծնած էր Թէհրան, Քաղաքական գիտութեանց մէջ վկայուած
Բարիզէն. եւ այդ ասպարէզին մէջ էր որ փայլեցաւ Պարսից Շահին (1884), Անգլիոյ Վիկ-
տորիայի (1887) եւ Ռուսաց Ցարին քով (1894) նախ իբրեւ Դեսպանական Թարգման. յե-
տոյ Պարսկաստանի մէջ երկար ատեն պաշտօնավարեց Արտ. գործոց Նախարարութեան
մէջ (1896–1900)։ Յաջորդաբար եղաւ ի Պերլին՝ Պարսկական դեսպանատան՝ խորհրդա-
կան, փոխ-դեսպան եւ ապա դեսպան (1900, 1906, 1912). յետոյ դեսպան ի Լոնտոն
(1928)։ Հուսկ 1930ին եղաւ Պարսկաստանի առաջին դեսպանը Ճաբոնական կայսրու-
թեան մօտ, ուսկից վերադարձին էր որ վախճանեցաւ Խարպինի մէջ։


# ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
## ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

**ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

( ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ )

( ԳԻՆ ՖՐ. Զ. 2. 40 )

Հ. ՄԱՆՈՒԷԼ ԹԱՇՃԵԱՆ

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ**

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ (Գ. ՏԱՐԻ)

(ԳԻՆ ՖՐ. Զ. 1. 20)

Հ. ԴԱՆԻԷԼ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ

**ՀԱՅ. - ԳԱՂՂԻԵՐԷՆ**

ԳԵՂԵՑԻԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Նրկսին, ամենանոր բառամթերքով,*
*և գաղղիական ոճերով լաւագոյնը որ լոյս տեսած ըլլայ ցարդ*

( ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 3 )

*Հայ տաղանդաւոր և սիրուած քերթող*

**ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆԻ**

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ՀԱՒԱՔԱԾՈՆ**

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

մեծադիր եւ շքեղ տպագրութիւն

*Զեղչուած գին, կանխիկ, ճանապարհածախսով*

ԻՏԱԼԻԱ՝ Տոլար 2.86 — ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ Տոլար 3.12

կը վաճառուի միայն Ս. Ղազարու տպարանէն

Հ. ՍԻՄԷՈՆ ԵՐԵՄԵԱՆ

**ԱԶԳԱՅԻՆ ԴԷՄՔԵՐ**

ԳՐԱԳԷՏ ՀԱՅԵՐ

ԻՆՆԵՐՈՐԴ ՇԱՐՔ

*** ( ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 3 ) ***

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱՔՃԵԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

*Նախնական և Երկրորդական դպրոցներու համար*

**ԱՅԳԵՍՏԱՆ**

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

( ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 1 )

ԱՄԷՆ ՀԱՅՈՒ ՍՐՏԻՆ ✤✤ ✤✤ ՄՕՏԻԿ ՅՈՒՇԵՐ ❊

| | իտալ. Լիր |
|---|---|
| ԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ *պարզ գոյն, հատը կ'արժէ* | 0 20 |
| » » *գունաւոր* » » | 0 35 |
| *Հայաստանի Նկար գունաւոր, մեծադիր* | 3 — |
| *Ատրպայրի գիւցազները գունաւոր, մեծադիր* | 3 — |
| *Այվազովսկիի Քաոսը գունաւոր* | 3 — |
| » *փարոս Նափոլիի գունաւոր* | 3 — |
| *Հ. Ղեւոնդ Ալիշան, գունաւոր, մեծադիր* | 3 — |
| ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ *Քարտեր 16 հատ, հատը* | 0 20 |
| » *սեւատիպ պատկերներ մեծադիր* | 3 — |
| ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ՔԱՐՏԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ, *սեւ, մեծադիր* | 15 — |
| » » » *սեւ, փոքրադիր* | 3 50 |
| ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄՆԵՐ 11 *Ազգ. դէմքերով, 100 հատը* | 5 — |

Ապսպրանքներու համար դիմել տպարանիս վարչութեան՝

IMPRIMERIE ARMÉNIENNE

St. Lazare

VENISE (Italie)


digitised by A.R.A.R.@